Արձանագրություն N 2

«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «14» հունվարի 2022 թ. ժամը 10:30-ին

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի.

Նախագահ՝ Մ. Երիցյան

Անդամներ՝ Ա. Սահակյան, Ձ. Օրդյան

Քարտուղար՝ Ա. Վիրաբյան

Բացակայում է.

# Օրակարգ.

**«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-07» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի անցկացում և արդյունքների հաստատում**

**Ընդունել ի գիտություն, որ՝**

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել և հիմնավորումներ չեն ներկայացվել:

1. **«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.**
   քարտուղարի կողմից 10:30-ին հայտերի գրանցամատյանը փակելուց հետո, նախագահը հրապարակել է նախահաշվային գները:
2. **Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | ԱՁ «Իվետտա Երիցյան Բորիսի» | ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան, 11, հեռ. 094-45-28-39, e-mail: Yeritsyan_i@mail.ru |
| 2. | «Այ Սերվիս» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան, 3/14, հեռ. 096-55-26-24, e-mail: tenderiservice@gmail.com |
| 3. | ԱՁ «Դավիթ Պետրոսյան» | ՀՀ, Արարատի մ., գ. Ոստան, Արարատյան, 80, հեռ. 096-59-50-10, e-mail: davagiv@mail.ru |

3. **Տվյալներ ծրարը կազմելու, ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին և բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
   մասնակից ընկերությունների կողմից ներկայացված ծրարները կազմված են «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-07» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
   Փակ կնքված ծրարով ԱՁ «Իվետտա Երիցյան Բորիսի» և ԱՁ «Դավիթ Պետրոսյան» ընկերությունները ներկայացրել են.

- դիմում-հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու,
- գնային առաջարկ:

Փակ կնքված ծրարով «Այ Սերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է.

- դիմում-հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր,
- գնային առաջարկ:

Վերոնշյալ կազմակերպությունների ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

4. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.**

   Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-07» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/.**

Ընթացակարգի հրավերով սահմանված կարգին բավարարող մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են հավելված № 1-ում:

Որոշում.

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը և «Գնումների մասին» օրենքի 38-րդ հոդվածը, վերոհիշյալ կազմակերպություններին հրավիրել միաժամանակյա բանակցության:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022 թվականի **հունվարի 19-ին ժամը 11:00-ին ք. Երևան, Հերացի 12 հասցեում:**

Ընդունվել է որոշում՝

Կողմ՝ 3

Դեմ՝ 0

Ստորագրություններ.

Գնահատող հանձնաժողովի Նախագահ՝ ______ Մ. Երիցյան

Անդամներ՝ ______ Ա. Սահակյան

______ Ձ. Օրդյան

Քարտուղար՝ ______ Ա. Վիրաբյան

Հավելված N 1
N 2 արձանագրության

| /h | Ապրանքի անվանումը | Չ/մ | Քանակ | Նախահաշվային | ԱՁ «Իվետտա Երիցյան Բորիսի» | | «Այ Սերվիս» ՍՊԸ | | ԱՁ «Դավիթ Պետրոսյան» | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Գումար | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ |
| 1 | Համակարգիչների, մոնիտորների և Անխափան սնուցման սարքերի (UPS) սպասարկում | դրամ | 1 | 409,720 | 415,000 | 415,000 | 409,720 | 409,720 | 409,750 | 409,750 |
| 2 | Թանաքային, լազերային տպիչների և պատճենահանող սարքերի սպասարկում | դրամ | 1 | 69,000 | 69,000 | 69,000 | 75,000 | 75,000 | 69,000 | 69,000 |